մար, որպէսզի ես հայեր տեսնեմ եւ ինձ միայնակ չզգամ: Համարեա ամէն կիրակի Կարօն, Սագօն, Ռափայէլը եւ այդ հայ ընտանիքը բոլորում էին նրա սեղանի շուրջը, եւ նա ուրախութիւնից չգիտէր, թէ որպէս գոհացնէր իր հիւրերին: Նա խնդրում էր մեզ հայերէն խօսել եւ ինքը մեծ բաւականութեամբ լսում էր, ասելով, թէ մեր լեզուի մէջ գտնում է շատ ախորժելի հնչիւններ: Նա սիրում էր լսել եւ հայոց երգեր, եւ շատ անգամ մեզ երգել էր տալիս հայ պանդուխտի երգը.

Կռունկ, ուստի՞ կուգաս,

Ձայնիկդ ի հոգիս,

Կռո՛ւնկ, մեր աշխարհեն

Խաբրիկ մը չունի՞ս...

— Այդ երգի անգղիերէն թարգմանութիւնը գիտէր տիկինը: Նրա մեծ աղջիկը շուտով յօրինեց երաժշտական խաղեր այդ երգի եղանակով, նա ածում էր դաշնամուրի վրայ, եւ մենք խումբով երգում էինք: Բարեսիրտ կինը նայում էր մեզ վրայ եւ թաշկինակը սեղմում էր աչքերին:

Այդ միջոցին Ասլանը նոյնպէս զգացոեցաւ, եւ նրա ձայնը սկսեց դողալ:

— Սկզբում, — շարունակեց նա, — մենք սովորում էինք զանազան տարրական դպրոցներում, որոնց մէջ մեզ տեղաւորեց ինքը մստեր Ֆիշերը: Նա միշտ իր հոգաբարձութեան տակ էր պահում եւ չէր դադարում ամէն կերպով հսկել մեզ վրայ: Նրա տունը մեզ համար հայրական տուն էր, ուր գնում էինք ամենայն սիրով: Մի անգամ ես հիւանդ էի, բարեսիրտ ծերունին ամբողջ գիշերներ ոտքի մատների վրայ ման էր գալիս իմ մահճակալի շուրջը, ուղղում էր իմ անկողինը եւ փոխում էր իմ սպիտակեղէնները: Երբ բաւական սովորեցինք, մեզանից իւրաքանչիւրը ընտրեց մի մասնագիտական առարկայ: Ես ընտրեցի բժշկութիւն եւ շարունակեցի մինչեւ վերջը: Ռափայէլը սիրում էր արհեստներ, մեքենայագործութիւն, ճարտարութիւն, նա ընտրեց այդ մասը: Բայց Կարօն եւ Սագօն անդադար մի առարկայից դէպի միւսն էին անցնում, մէկը ընտրում էին. մի քանի ամիս սովորում էին, յետոյ ձանձրանալով թողնում էին եւ մի այլն էին սկսում: Դրանց փոփոխամտութիւնը ոչ սակաւ հոգսեր պատճառեց թէ՛ մստեր Ֆիշերին եւ թէ՛ իրանց բարերարներին, որոնց ծախքով սովորում էին: Մեր շրջանում առակ էր դարձել ասել՝ թէ «Կարօն իր մասնագիտութիւնը այնպէս շուտ է փոխում, որպէս իր շապիկը»: Սագօն իր փոփոխամտութեան մէջ աւելի չափաւոր էր: Իսկ Կարօն այն ծայրայեղութեան հասաւ, որ մի անգամ թողեց մաթեմատիկան եւ մտաւ զինորական դպրոց: Յետոյ այնտեղից եւս դուրս գալով, մի ագարակում, ուր գործնական